

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԵՎՈՐԳ ԱՇՈՏԻ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՈՂԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԿՑՎԱԾ ՄԵՔԵՆԱՅԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ ԵՎ ՈՈՏՈՐԱՅԻՆ
ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՕՐԳԱՆԻ ՊԱՐԱՄԵՏՐԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

**Ե.20.01- «Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում և
մեքենաներ» մասնագիտությամբ տեխնիկական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ - 2025

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական խորհրդում:

Գիտական ղեկավար՝ տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Արամայիս Մյասնիկի Եսոյան

**Պաշտոնական
ընդդիմախոսներ՝** տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Դանիել Պետրոսի Պետրոսյան

տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ
Սերյոժա Խաչատրուիք Պապյան

**Առաջատար
կազմակերպություն՝** **ՀՀ Շահումյանի «Ազրոսպասարկում» ԲԲԸ**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2025թ. հունիսի 22-ին ժամը 11⁰⁰-ին, Հայաստանի ազգային ագրարային համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի թիվ 033 «Գյուղատնտեսության մեքենայացում» մասնագիտական խորհրդում,
հետևյալ հասցեով՝ 0009, ք. Երևան, Տերյան 74:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀԱԱՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2025 թ. հունիսի 20-ին:

**033 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝**
տեխնիկական գիտությունների
թեկնածու, դոցենտ



Արթուր Վաղինակի Ալթունյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Հոդի մշակման ժամանակակից համակարգերում հաճախ ներառվող ծանր տրակտորների օգտագործումը, գյուղատնտեսական տեխնիկայի բազմաթիվ անցումները խթանում են դեղոադացիայի գործընթացը: Գերպնդացումը զգայիրեն մեծացնում է մեքենաների քարշային դիմադրությունը, որը հանգեցնում է էներգիայի ռեսուրսների լրացուցիչ ծախսերի: Բերքատվությանը զգայի վնաս է հասցնում հատուկ հողային և կիմայական պայմաններում սխալ ընտրված տեխնիկական սարքավորումների կիրառումը կամ պահանջվող տեխնոլոգիայից շեղումները, ցանքաշրջանառությանը չհամապատասխանելը, պարարտանյութերի պակասը կամ դրանց լիակատար բացակայությունը:

Խնդրի օպտիմալ լուծումը տեխնոլոգիական գործողությունների համատեղում է՝ միաժամանակ նվազեցնելով ամբողջ դաշտում տեխնիկական միջոցների անցումների քանակը, վառելիքի, քսանյութերի և այլ էներգետիկ ռեսուրսների սպառումը՝ բարեկավելով հողագործության որակը:

Լանջերի մշակությունն իր հերթին էականորեն տարբերվում է հարթ տեղանքի մշակությունից: Դա պայմանավորված է ոչ միայն տեղանքի թեքությամբ, այլ նաև մշակության տեխնոլոգիական գործընթացի կազմակերպման առանձնահատկություններով: Եթե հարթ տեղանքում տեխնոլոգիական սխեմայի ընտրությունը բավականին պարզ է և հիմնականում կախված է դաշտի ռելիեֆով, ապա լանջի մշակման դեպքում սխեմայի ընտրության վրա ազդում են լրացուցիչ այլ գործոններ ևս՝ էրոզիայի նախադրյաների ավելացում, մշակության խորության անհավասարաչափություն, ագրեգատի արտադրողականության նվազում, մշակության ցածր որակ, կայունության նվազում և այլն:

Ներկայացված ատենախոսության թեման նվիրված է երկրագործության կարևոր խնդիրներից մեկին՝ լեռնային երկրագործությունում հոդի մշակման գործընթացի բարեկավմանը, որը կատարվել է տեսական և գիտափորձական հետազոտությունների և բազմակողմանի վերլուծության հիման վրա: Ընդ որում խնդիրը դիտարկվում է ինչպես տեխնոլոգիական, այնպես էլ շահագործական ցուցանիշների լավարկման տեսանկյունից: Վերոհիշյալը հիմնավորում է թեմայի արդիականությունը:

Աշխատանքի նպատակը և հետազոտության խնդիրները: Ատենախոսական աշխատանքի նպատակն է վարի պարտադիր ներգրավմամբ հոդի նվազագույն մշակության տեխնոլոգիայի և դրա իրականացման համակցված մեքենայի մշակումը:

Առաջարված նախատեսված հասնելու համար անհրաժեշտ է տեսական-գիտափորձնական հետազոտությունների ճանապարհով լուծել հետևյալ խնդիրները:

1. Հոդի մշակության ավանդական և նոր տեխնոլոգիաների վերաբերյալ գիտատեխնիկական գրականության և գիտափորձնական հետազոտությունների վերլուծություն, թերությունների և առավելությունների բացահայտում և զարգացման միտումների նախանշում:

2. Մշակել հողի մշակության նոր տեխնոլոգիա, որտեղ վարը լինի պարտադիր ընդգրկված և հիմնավորել առաջարկվող տեխնոլոգիայի կիրառման պարբերականությունը:

3. Նոր տեխնոլոգիան իրականացնելու համար մշակել համակցված հողամշակման մեթենայի կառուցվածքա-տեխնոլոգիական սինեմա:

4. Տեսականորեն հիմնավորել համակցված մեթենայի սկավառակային բանվորական օրգանների կառուցվածքային, տեխնոլոգիական և շահագործական պարամետրերը:

5. Համակցված մեթենայի սկավառակային մարտկոցների գիտափորձնական հետազոտությունների արդյունքներով ճշգրտել տեսական հետազոտությունների արդյունքներով մշակված պարամետրերի արժեքները և ստացված օրինաչափությունների հավաստիությունը:

6. Կատարել առաջարկված համակցված մեթենայի տեխնիկա-տնտեսական հիմնավորումը:

Հետազոտության օբյեկտը և մեթոդները: Հետազոտության օբյեկտ է հանդիսացել մեր կողմից նախագծված և պատրաստված հարթ վարի ճակատային գութանը (ՀՀ արտոնագիր թիվ 846Y, 2023) և գիտափորձնական հետազոտությունների արդյունքում դրա կատարելագործված տարրերակը:

Տեսական և գիտափորձնական հետազոտությունների կատարման համար օգտագործվել են գիտական հետազոտությունների պահանջների շրջանակում ընդունված գիտափորձերի կատարման մեթոդներ, մաթեմատիկական վերլուծության մեթոդներ:

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸՑ:

1. Հողի նվազագույն մշակության շրջանակներում հիմնավորվել և մշակվել է հողի նախացանքային մշակության նոր տեխնոլոգիա, որտեղ վարը համարվում է պարտադիր տեխնոլոգիական գործնթաց: Սահմանվել է առաջարկվող տեխնոլոգիայի կիրառման պարբերականությունը:

2. Մշակվել է համակցված հարթ վարի ճակատային գութան:

3. Տեսական հետազոտություններով հիմնավորվել է առաջարկվող մեթենայի ճակատային գութանի թևի նվազագույն դիմադրություն ապահովող պարամետրերը:

4. Տեսականորեն հիմնավորել է համակցված մեթենայի սկավառակային բանվորական օրգանների կառուցվածքային, տեխնոլոգիական և շահագործական պարամետրերը:

5. Գիտափորձնական հետազոտությունների արդյունքներով ճշգրտվել է տեսական հետազոտությունների արդյունքներով մշակված պարամետրերի արժեքները և ստացված օրինաչափությունների հավաստիությունը:

6. Կատարվել է առաջարկված համակցված մեթենայի տեխնիկա-տնտեսական հիմնավորումը:

Աշխատանքի գործնական նշանակությունը: Կատարված տեսական և գիտափորձնական հետազոտությունների արդյունքները հնարավորություն են տվել կատարելագործել առաջարկված համակցված հարթ վարի ճակատային գութանը և

այն օգտագործել հողի նախացանքային մշակության գործընթացում, որը հնարավորություն կտա կրճատել շահագործական ծախսերը, կանխարգելել լանջերի էրոզիոն գործնքացները և հողի մեքենայական դեգրադացիան:

Մշակված հաշվարկի տեսության և գիտափորձնական հետազոտությունների արդյունքները կարելի է օգտագործել տեխնոլոգիապես նմանատիպ մեքենաների մշակման համար:

Ատենախոսական աշխատանքին վերաբերող նյութերն արտացոլված են «Գյուղատնտեսական մեքենաներ» առարկայի դասավանդման ծրագրում:

Աշխատանքի ապրոբացիան: Ատենախոսական աշխատանքի հիմնական դրույթները գեկուցվել և հավանության են արժանացել XXVII International Scientific Conference on Advance in Civil Engineering “Construction the Formation of Living Environment” (FORM-2024). միջազգային գիտաժողովում, «Ավտոտրակտորների և գյուղատնտեսական մեքենաների» և «Մեքենասարքավորումների ճարտարագիտության և տեխնիկական անվտանգության» ամբիոնների սեմինար խորհրդակցություններում (2021-2024թ.թ.) և "Ավտոտրակտորներ և գյուղնեքենաներ" ամբիոնի ընդույնված նխուում (2025թ.թ.):

Հետազոտությունների արդյունքների հրատարակումը: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են 7 գիտական աշխատանքներում և մեկ գյուղատնտունագրում:

Աշխարհանքի կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 5 գլուխներից, ընդհանուր եղակացություններից ու առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից՝ 136 անվանումով և հավելվածներից: Աշխատանքի հիմնական տեքստը շարադրված է համակարգչային տպագրության 132 էջի վրա, ընդգրկում է 34 նկար և 5 աղյուսակ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում ներկայացված են թեմայի արդիականության հիմնավորումը: Բերված են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

Սուածին գլխում ներկայացված է հարցի դրվագը: Կատարվել է հողի մշակության տեխնոլոգիաների վերլուծություն: Մասնավորապես շեշտը դրվել է հողի նվազագույն մշակության տեխնոլոգիաների վրա: Տրվել է դրանց սոցիալ տնտեսական գնահատականը: Առանձնակի ուշադրություն է դարձվել լանջերի մշակման առանձնահատկություններին և էրոզիայի խնդիրներին: Ներկայացվել են հողի մշակության էներգոխնայող տեխնոլոգիաների զարգացման հեռանկարները:

Կարևորվել է կոմբինացված մեքենաների կիրառման անհրաժեշտությունը և ներդրման հիմնական ուղղությունները:

Մշակված գրական ակնարկի արդյունքները ներկայացված են եղակացություններով, որոնց հիման վրա ճշգրտված և ձևավորված են հետազոտությունների նպատակն ու հիմնական խնդիրները:


Երկրորդ գլխում հաշվի առնելով հողի մշակության գործընթացում անվար տեխնոլոգիայի կիրառմամբ ներկայում կիրառվող նվազագույն մշակության տեխնոլոգիաների թերությունները, ազդեգասի էներգետիկական, բնապահպանական և տեխնիկաշահագործական ցուցանիշների բարելավման նպատակով առաջարկվել է հողի մշակության նոր տեխնոլոգիա և դրա հրականացման համար համակցված հարթ վարի ճակատային գութան:

Առաջարկված մեքենայի համար ստացվել է << արտոնագիր:


Առաջարկվող տեխնոլոգիայի էլույսունը կայանում է հետևյալում.

Հողը պետք է 3-4 տարին մեկ վարվի, որի կատարման ժամանակ առը պատուակային մակերևույթ ունեցող թևով մասսամբ շրջվում է, բայց մնում է նոյն ակոսի սահմաններում և իրանին հաջորդաբար տեղադրված սկավառակային բանվորական օրգաններով փիրտեցվում և հարթեցվում է: Այսինի տեխնոլոգիա ապահովելու համար հաշվի առնելով ՊՖՆ-2Ա ճակատային գութանի իրանների լայնական և սիմետրիկ դասավորությունը, կոմպակտությունը վերջինիս բազայի վրա ստեղծվել է համակցված հարթ վարի ճակատային գութան, որը ատենախոսության կատարման ընթացքում գիտափորձնական հետազոտությունների հիման վրա կատարելագործվել է:


Կատարվել է առաջարկված համակցված մեքենայի տեխնոլոգիական սիստմայի մշակում և սկավառակավոր բանվորական օրգանների պարամետրերի հիմնավորում:



Նկ.1. Համակցված հարթ վարի ճակատային գութանի տեխնոլոգիական սիստման նախնական փուլում:
1-դանակ, 2-ճակատային գութան, 3-սկավառակային մարտկոցներ, 4-գլանվակ:



Նկ.2. Սկավառակի և մարտկոցի ընդգրկման լայնության որոշման սիստմա:



Նկ. 3. Թեսի
պարուրազգածն՝ ա և
շրջանածն՝ բ ուղղորդ
կորերի հաշվարկային
սխեմաները

Տեսական հետազոտություններով հիմնավորվել է գութանի նվազագույն դիմադրության դանակ-թև մակերևույթի պարամետրերը համեմատական անցկացնելով գութանի և բուղդղերի թևերի միջև:

Առաջարկվել է դանակ-թև մակերևոյթին տալ լրգարիթմական պարուրագծի տեսքը՝ նկատի ունենալով, որ այն կապահովի նվազագույն քարշային դիմադրություն։ Դա ներկայացվում է հետևյալ արտահայտությամբ՝

$$\rho = \rho_0 e^{\psi t g\varphi}, \quad (1)$$

որսեղ ρ_0 - ն կորի հավասարման ինտեգրման հաստատունն է և բնութագրում է քետուային շառավղի՝ ρ -ի սկզբնական արժեքը, քետուային անկյան սկզբնական արժեքի $\psi = 0$ դեպքում, φ -ն հորի և թիկ միջև շփման անկյունն է (նկ. 3ա):

Առաջարկված խնդրի պահանջների համաձայն, հաշվարկի տեսությամբ որոշվել է՝ լոգարիթմական պարուրագծով ուղղորդ կորու դանակ-թև բանող օրգանի տեղակայման օպտիմալացված պարամետրեր:

Համապատասխան գործողությունների արդյունքում ստացել ենք լոգարիթմական պարուրագիր ընութագրող հետևյալ արտահայտությունը.

$$\rho_{min} = \rho_0 e^{-0.4 \cdot 18^0} \text{J}:$$
(2)

Նոյն սկզբունքով կարելի է ստանալ թվի լրացրիթմական պարուրագի տեսք ունեցող ուղղող կորի մյուս ընութագրական կետերի պարամետրերը:

Թեսի առավելագույն բեռնվածությունն առաջանաւմ է հորի կտրման տեխնոլոգիական գործնթացից, ուստի լոգարիթմական պարուրագծաձև ուղղորդ կորով կազմավորված դանակի թվական մակերևույթի միայն AE աղեղով պարփակված մասն է բեռնված աշխատում։ Շարարդվածը հիմք է տայիս փոփոխել թվի այն մասը՝ AE, որը հորի հետ փոխազդեցույթան ընթացքում գտնվում է բարդ լարվածադեֆորմացիոն վիճակում։ Առաջադրված հ խորությամբ հողաշերտը կտրելուց հետո զանգվածը լցվում է թվի վրա, այնուհետև կազմավորվում է կուտակապրիզման և դրանով ավարտվում կտրման տեխնոլոգիական գործնթացը։ Դրան հաջորդում է փորվածքի տեղափոխումը դեպի առաջ։ Քանի որ թվի H-h մասը գտնվում է հողաշերտի կտրման

լարվածադեֆորմացիոն վիճակից դուրս գոտում, այդ մասի ուղղորդ կորն ընտրվում է՝ թափառություն շառավղով շրջանագծի մի հատվածով՝ BE (նկ. 3բ):

Թեսի BE սեկտորի թափառի հաշվարկի համար օգտվում ենք E կետում լոգարիթմական պարուրագծի հայտնի մեծությունից, որտեղ շառավիր վեկտորը՝ ρ_0 , նորմալից շեղված է շիման անկյան տակ: Կատարելով համապատասխան գործողությունը, ստացվում է հետևյալ բանաձևը՝

$$r = \frac{H-h}{2\cos\beta \sin(\phi+\beta)}: \quad (3)$$

Կատարվել է համակցված ճականային գութանի ուժային վերուծություն: Դրա քարշային դիմադրությունը կիխի հրանեների վրա ազդող ուժերի համագորի՝ R_{xz} , կտրող սկավառակներով հողի կտրման դիմադրության՝ R_u , հենարանային անիվների գործման դիմադրության՝ R_{wx} և իրաների և ակոսահատակի միջև շիման ուժի՝ $F_{2\phi}$, գումարը.

$$\begin{aligned} P_h &= R_{xz} + R_u + R_{wx} + F_{2\phi} = \\ 1,01Kabn + a_u n \left(\frac{8}{3} f \sqrt{a_u (2r - a_u)} + \Delta_u k \right) + R_u \sin \delta + Gf_0 \end{aligned} \quad (4)$$

Սակայն այս հավասարումը հնարավորություն չի տալիս որոշել գութանի քարշային դիմադրությունը, քանի որ անհայտ է հենարանային անիվի հակագդման մեծությունը: Վերջինս որոշելու համար գրաֆիկական եղանակով լուծվել է գութանի հավասարակշռության խնդիրը, որը թույլ է տալիս զնահատել մեքենայի էներգետիկ ցուցանիշները և նախանշել հետագա կատարելագործման հիմնական ուղղությունները:

Առաջարկված մեքենայի հավասարակշռությունը դիտարկենք հարթ տարածքում: Հետազոտվել է համակցված մեքենայի երեք օղակների վրա ազդող ուժերը և որոշվել են այն ուժերի արժեքները, որոնք տեսականորեն հնարավոր է որոշել:


Համակցված մեքենայի վրա ուղղաձիգ հարթության մեջ ազդում են հետևյալ ուժերը.

- համակցված մեքենայի ծանրության ուժը, որը ընդունում ենք նրա կազմի մեջ մտնող երեք օղակների՝ գութանի, սկավառակավոր մարտկոցների և գլանվակի, ծանրության ուժերի գումար. $G_{hu}=G_q+G_{u,i}+G_{q_l}$
- գութանի իրանեների վրա հողի հակագդման ուժի բաղադրիչը՝ R_{xz} ,
- շիման ուժը գութանի իրանեների և ակոսահատակի միջև՝ $F_{2\phi}$,
- գութանի կտրող սկավառակային դանակների դիմադրության ուժը՝ R_u :
- համակցված մեքենայի քարշի ուժի P_{xz} բաղադրիչը,
- ճակատային գութանի հենարանային անիվների հակագդման բաղադրիչը՝ R_{wx} ,
- սկավառակային մարտկոցների վրա $R_{u,i}$ դիմադրությունը,
- գլանվակի վրա R_{q_l} դիմադրությունը:

Տեսական ճանապարհով ստացել ենք ուղղաձիգ-երկայնական X Oz հարթության մեջ (նկ.5), համակցված մեքենայի վրա ազդող ուժերի հետևյալ արժեքները. $G_a=9,8\text{կՆ}$, $G_{u,i}=0,8\text{կՆ}$, $G_{q_l}=0,6\text{կՆ}$, $G_{hu}=9,8+0,8+0,6=11,2\text{կՆ}$, $R_{xz}=27,5\text{կՆ}$, $F_{2\phi}=3,92\text{կՆ}$, $R_{u,i}=0,6\text{կՆ}$, $R_{u,i}=4,32\text{ կՆ}$, $R_{q_l}=1,2\text{կՆ}$:

Տեսականորեն հնարավոր չէ որոշել համակցված մեքենայի քարշի ուժի P_{xz} բաղադրիչը և հենարանային անհվաների հակագդման բաղադրիչը՝ R_{wz} : Այդ ուժերի արժեքները կարող ենք որոշել գրաֆիկական եղանակով, օգտագործելով այն հանգամանքը, որ նշված երկու անհայտ ուժերի ուղղությունները հայտնի են: Անիվի հակագրումն ուղղված է ուղաձիգի նկատմամբ՝ $\delta = 12^\circ$ անկյան տակ (միջին պնդության հողերի համար), իսկ քարշի ուժն ունի տրակտորի ակնթարթային կենտրոնը մեքենայի ծանրության կենտրոնին միացնող ուղղի ուղղությունը:

Գութանի հավասարակշռության խնդիրը գրաֆիկական եղանակով լուծելու համար որոշակի մասշտաբով երկու պրոյեկցիաներում կառուցվում է գրաֆանի կառուցվածքային սխեման: Սխեմայի վրա տեղադրվում են ազդող ուժերի վեկտորները, ապա կառուցվում է ուժային բազմանկյունը և կատարվում հայտնի ուժերի երկաչափական գումարում: Ուժերի գումարումը կարեի է կատարել ցանկացած հերթականությամբ, սակայն վերջում գումարվում են հենարանային հակագրումը և դիմադրության բոլոր ուժերի համազորը, որոնց մեծությունները անհայտ են, իսկ ուղղությունները՝ հայտնի: Հավասարակշռության պայմանի համաձայն ուժային բազմանկյունը պետք է լինի փակ, իսկ համազորն անցնի համակարգի պտտման ակնթարթային կենտրոնով (նկ. 4 և 5):




Նկ.4. Համակցված հարթ վարի ճակատային գութանի քարշային դիմադրության գրաֆիկական եղանակով որոշման սխեմա

Նկ.5. Համակցված հարթ վարի ճակատային գութանի քարշային դիմադրության որոշման ուժային բազմանկյունի

Համակցված մեքենայի հավասարակշռության խնդրի լուծման արդյունքում ընդհանուր քարշային դիմադրությունը կազմել է 32.3 կՆ:

Հետագա վերլուծություններում հիմք է ընդունվել հենց այս ցուցանիշը, հաշվի առնելով, որ վերջինիս ճշգրտության աստիճանը ավելի բարձր է:

Կատարվել է ծևակող սկավառակավիր ցաքանի էներգետիկական հաշվարկ: Սֆերիկ սկավառակը աշխատանքի ժամանակ իր վրա է վերցնում սայրի, երեսակի և բանվորական մակերևույթի դիմադրությունները:



Նկ.6. Սկավառակի վրա ազդող ուժերի սխեմա

Ազրութեանիկական պահանջների համաձայն սկավառակներով պետք է հարթեցվի և փիսրեցվի ճակատային գութանի պտուտակային թևերով շրջաձ բավականին շատ հողազանգված, ուստի մշակման խորությունը՝ a -ն, և գրոհի անկյունը՝ α -ն, պետք է ընտրել թույլատրելի առավելագույն սահմաններում՝ $a=a_{\max}=18$ մ, $\alpha=\alpha_{\max}=22^{\circ}$: Նոյն հիմնավորմամբ սկավառակի տրամագիծը նոյզես վերցվել է հնարավոր առավելագույնը՝ $D=600$ մ (նկ. 6):

Որոշվել է ցաքանի ընդհանուր դիմադրությունը.

$$P_g = 2 \sum R^b = 4.32 \text{ կՆ} \quad (5)$$

Համակցված մեքենայի կառուցվածքում ընդգրկվել է օդախթանավոր տիպի 3ԿՎ-6 գլանվակի մի սեկցիա, որի ընդգրկման լայնությունը կազմում է 2մ: Գլանվակի քարշային դիմադրությունը որոշվել է հետևյալ բանաձևով՝ $R_{qf}=kB$, որտեղ k -ն մեքենայի տեսակարար դիմադրությունն է, որը միջին պնդության հողերի համար հանձնարարվում է վերցնել $0.5-0.7$ կՆ/մ սահմաններում: B -ն մեքենայի ընդգրկման լայնությունն է: Հետևաբար համակցված մեքենայի գլանվակի քարշային դիմադրությունը կինի՝ $R_{qf}=1.2$ կՆ:

Այսիսով, համակցված հարթ վարի ճակատային գութանի ընդհանուր քարշային դիմադրությունը կինի՝

$$P = P_g + P_q + R_{qf} = 32.3 + 4.32 + 1.2 = 37.82 \text{ կՆ} \quad (6)$$

Ճակատային գութանի կառուցվածքից շրջգութանիկը հանելու պարագայում համակցված հարթ վարի ճակատային գութանի ընդիանուր քարշային դիմադրությունը 32.3կՆ-ից կնվազի 8կՆ-ով, հետևաբար կկազմի՝ $24.3+4.32+1.2=29.82$ կՆ:

Կատարվել է համակցված մեքենայի, ինչպես նաև առանձին տեխնոլոգիական գործընթացների (ճակատային գութանով վար, սկավառակավոր ցաքանում և գլանվակում) տեխնիկաշահագործական ցուցանիշների հաշվարկ:

Ստացված ցուցանիշների համեմատական վերլուծությունը ցուց է տախս, որ առաջարկվող մեքենայի կիրառման դեպքում վառելիքի հեկտարային ծախսը նվազում է 3.83 լիտրով կամ 8.9 տոկոսով; տեսակարար քարշային դիմադրությունը ճակատային գութանի կառուցվածքում շրջգութանիկները թողնելու դեպքում, ընդհամենը 0.7կՆ-ով է ավելի, քան առանձին կատարվող տեխնոլոգիական գործընթացները միասին վերցված, իսկ շրջգութանիկները հանելու դեպքում (առաջարկված տարրերակում) համակցված մեքենայի տեսակարար քարշային դիմադրությունը կնվազի 1.91 կՆ-ով կամ 11 տոկոսով:

Հաշվի առնենք նաև, որ անցումների քանակը կրկնատվի երկուավ, որի շնորհիվ կնվազի հողի մեքենայական դեգրադացիան: Մասնավորապես հետքի վրա հողի պնդացումը կնվազի, որը բնականաբար դրական է անդրադառնալու մշակաբույսերի բերքատվության վրա: Անցումների քանակի կրճատումը պարզ է, որ կրերի նաև քամու էրոզիայի և շահագործական ծախսների կրճատման:

Հետևաբար, ակնհայտ է դառնում առաջարկված տեխնոլոգիայի և տեխնիկական միջոցի ներդրման արդյունավետությունը և նպատակահարմարությունը:

Կատարվել է << լեռնային պայմաններում առաջարկված տեխնոլոգիայի և համակցված մեքենայի ներդրման հիմնավորում բնապահպանական խնդիրների համատեքստում:

Մակերեսային մշակության անվար տեխնոլոգիաները չեն կարող անընդմեջ կիրավել երկար ժամանակով, քանի որ ժամանակի ընթացքում հողի մակերեսային շերտի բերրիությունը նվազում է, հողն ավելի «խոցելի» է դառնում քամու էրոզիայի նկատմամբ: Միայն վարի շնորհիվ է, որ հողի խորը շերտերը (25-35սմ և ավելի) կարող են ներգրավվել մշակման գործընթացում: Մոլախոտերի դեմ պայքարում վարն անփոխարինելի է: Գութանով առի շրջումը նպաստում է որոշ հիվանդությունների կանխարգելմանը: Համադրելով վարի դրական և բացասական կողմերը, առաջարկվում է միջանկյալ լուծում՝ պարբերաբար 3-5 տարին մեկ (կախված հողակիմայական պայմաններից) վարը ներգրավել հողի մշակության տեխնոլոգիական գործընթացների մեջ:

Վարի բացասական կողմերը մեղմացնելու նպատակով առաջարկում ենք նաև, թեկուզ որոշակի պարբերականությամբ, վարը կատարել համակցված մեքենայի կիրառմամբ, համատեղելով նախացանքային մյուս տեխնոլոգիական գործընթացի կամ գործընթացների հետ, հաշվի առնելով հողի տեսակարար դիմադրությունը:

Առաջարկված համակցված մեքենայի օգտագործման նպատակահարմարությունը հիմնավորվել է նաև բնապահպանական տեսանկյունից: Դրա կիրառումը

նվազեցնում է հողի մեքենայական դեգրադացիան:

Գիտափորձնական հետազոտությունների նպատակն է լաբորատոր-դաշտային փորձարկումների արդյունքում ճշգրտել հարթ վարի համակցված մեքենայի շահագործական, տեխնոլոգիական և երկրաշափական պարամետրերի տեսական հետազոտություններով ստացված արժեքները: Ինչպես նաև հիմնավորել առաջարկված համակցված մեքենայի կիրառման տնտեսական նպատակահարմարությունը, գնահատել հողի մշակության որակը, որոշել էներգետիկ ծախսները և նախանշել հետագա կատարելագործման ուղղությունները:

Երրորդ գլխում մշակվել է գիտափորձերի ծրագիրը և մեթոդիկան՝ ենթելու հետազոտության առաջադրված խնդիրներից: Ծրագրի հիմքում առաջին հերթին դրվել է հարթ տեղանքում և լանջերում առաջարկված համակցված մեքենայի նկատմամբ տեխնոլոգիական պահանջը՝ ագրեգատի մեկ անցումով ապահովել բավարար որակի նախացանքային մակերևույթ: Պարտադիր նկատի ենք ունեցել էներգետիկական և բնապահպանական խնդիրները:

Ծրագրով նախատեսվում է տեսական հետազոտություններով ստացված պարամետրերով պատրաստված համակցված մեքենայի փորձանմուշի առանձին օղակների լաբորատոր և դաշտային փորձարկումներ:

Լաբորատոր գիտափորձերի ժամանակ հետազոտության օբյեկտ են հանդիսացել համակցված մեքենայի սկավառակային մարտկոցների առանձին բանվորական օրգանները, ինչպես նաև սկավառակային բանվորական օրգաններով կազմված մարտկոցների գույքը:

Դաշտային գիտափորձերի համար օբյեկտ են հանդիսացել S-1504 տրակտորով ագրեգատավորված առանց շրջգործանիկի և լավարկված պարամետրերով խոփ-թև մակերևույթով ճակատային ՊՖՆ-2Ա գութանը, ՄՏՀ-80 տրակտորը՝ ագրեգատավորված հատուկ պրոֆիլ տեսական հետազոտությունների արդյունքներով հիմնավորված լաբորատոր գիտափորձերով ճշգրտված պարամետրերով պատրաստված սկավառակային մարտկոցների գույգը, ինչպես նաև գիտափորձերի արդյունքներով կատարելագործված և լավարկված պարամետրերով սկավառակների տարբեր գորիի անկյուններով և շրջանակի հատուկ պրոֆիլով սկավառակային մարտկոցները:

Լաբորատոր գիտափորձերը կատարվել են Հայաստանի Ազգային Ագրարային համալսարանի Ավտոտրակտորերի և գյուղմեքենաների ամբիոնի թիվ 129 լաբորատորիայի հողային խրամատի վրա (նկ. 7):

Գիտափորձերի ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել տարբեր հետազոտողների կողմից գնահատված ճակատային գութանով հարթ տեղանքում և լանջերում մշակության որակը, բացահայտված թերությունները, մասնավորապես այն հանգամանքը, որ ճակատային գութանի կառուցվածքում շրջգործանիկների առկայությունը նպաստում էր առերի լավ շրջման, սակայն չէր ապահովում հողաշերտի լիարժեք փխրեցում և մոլախոտերի դեմ արդյունավետ պայքար: Բացի այդ շրջգործանիկի ընդգրկումը ճակատային գութանի կազմում էր մոտ 25-30 տոկոսով, ավելացնում էր քարշային դիմադրությունը, իսկ որոշ դեպքերում առիթ էր

տալիս իրանների միջև հողագանգվածի սեպման: Ուստի ներկայացվող աշխատանքում ճակատային գութանի կառուցվածքից հանվել է շրջգութանիկը, որի առյունքում չնայած չի ստացվում առերի լիարժեք շրջում, փոխարենը կնվազի ճակատային գութանով վարի քարշային դիմադրությունը, որից հետո համակցված մերժնայի կազմում ընդգրկելով հասուկ արոֆիլ սփերիկ սկավառակային մարտկոցներ ավարտին է հասցվում ճակատային գութանով կիսաշրջված և իրանների միջև առաջացած թմբային մակերևույթի փիլտրեցումը և հարթեցումը, միաժամանակ արդյունավետ պայքարելով մոլախոտերի դեմ:

Հիմնախնդրին այսպիսի մոտեցման պարագայում հողային խրամատի վրա նախագետ ստացվել է առանց շրջգութանիկի ճակատային գութանով վարված հողի տեսք, որի հետագա մշակումը կատարվել է հողային խրամատի սայլակին ամրացված հասուկ պարամետրերով սկավառակային մարտկոցով: Մարտկոցների աշխատանքի որակի գնահատման համար կատարվել են մարտկոցի անցումից հետո հողի անհարթության գնահատում չափումների օգնությամբ:

Հասուկ ստենդի օգնությամբ, որը մշակվել է, կատարվել է սկավառակային մարտկոցի պարամետրերի ճշգրտում, մասնավորապես որոշելով մարտկոցների օպտիմալ գրոհի անկյունը:

Ստենդը հնարավորություն է տալիս հողային խրամատի վրա բանվորական օրգանի փորձարկման ընթացքում փոփոխել երեք պարամետր՝ սկավառակի գրոհի անկյունը(α), սկավառակի դիրքը ընթացքին ուղղաձիգ հարթությունում (թեքության անկյունը՝ β) և մշակման խորությունը (γ):

Լաբորատոր գիտափորձերի ժամանակ կարևորվել է նաև մերենայի սկավառակային մարտկոցների էներգետիկական գնահատականը: Գիտափորձերով խնդիր է դրվել նախանշել քարշային դիմադրության նվազման ուղիները: Կատարվող գիտափորձերի ընթացքում որպես անկախ գործոններ ընտրվել են սկավառակի գրոհի անկյունը և մշակման խորությունը: Որպես օպտիմալացվող գործոն ընտրվել է սկավառակների քարշային դիմադրությունը: Գնահատվել է տեխնոլոգիական գործընթացի որակը:

Կազմվել է չափիչ տեղեկատու համակարգ:

Դաշտային գիտափորձերը կատարվել են Արագածոտնի մարզի Հնարերդ համայնքին պատկանող հողերում և «Նախրի Բերդիություն» ՍՊԸ-ի տարածքում: Դաշտային գիտափորձերի ժամանակ նախ հարթ տեղանքում և լանջում գնահատվել է առանց շրջգութանիկների Պեշ-2Ա ճակատային գութանով կատարված վարի որակը:

Կազմվել է ազրեգատ՝ ՄՏՀ-80+հասուկ պրոֆիլ սկավառակային մարտկոց:

Դաշտային գիտափորձերով որպես ցուցանիշ ընտրվելով մշակված հողի անհարթության չափը, գնահատվել է մշակության որակը սկավառակների տարրեր գրոհի անկյունների և տարրեր թեքությունների դեպքում:

Դաշտային գիտափորձերի արդյունքների հիման վրա կատարվել է համակցված մերժնայի շահագործական, կառուցվածքային և տեխնոլոգիական պարամետրերի ճշգրտում և կառուցվածքի կատարելագործում:



Նկ.7. Սկավառակային մարտկոցների լաբորորատոր գիտափորձերի համար նախապատրաստված հողային խրամատը՝ շարժական սայլակով:

Չորրորդ գլուխը նվիրված է գիտափորձերի արդյունքների վերլուծությանը: Կատարվել է հարթ վարի համակցված գութանի աշխատանքի որակի գնահատում և սկավառակային մարտկոցների կառուցվածքի ձևի հիմնավորում և օպտիմալ գրոհի անկյունների որոշում:

Մեր կողմից առաջարկվել է համակցված մեթենա, որը բաղկացած է երեք օլակներից՝ բարելավված պարամետրերով և առանց շրջգութանիկի ճակատային գութանից, հատուկ պրոֆիլի սկավառակային մարտկոցներից և գլանվակներից: Նշված երեք մեթենաները նախատեսված են տարբեր տեխնոլոգիական գործնականության համար և դրանց միավորման արդյունքում ագրեգատի մեկ անցումով պետք է ստացվի բավարար նախացանքային մակերևույթ:


Այսպիսի տեխնոլոգիական համալիրում շատ կարևոր է առաջին օլակի՝ առանց շրջգութանիկների ճակատային գութանի դերը, քանի որ եթե այս գութանը պետք է աշխատի ստվորական հարթ մակերևույթի վրա, ապա հաջորդ տեխնոլոգիական գործնականի՝ երեսվարի կամ ցաքանման համար նախատեսված մեթենան, տվյալ դեպքում հատուկ պրոֆիլի սկավառակային մարտկոցները հարկադրված են մշակերտ առաջին օլակով՝ ճակատային գութանով մշակված (վարված) անհարթ մակերևույթը:

Համակցված մեթենայի առաջին օլակի ճակատային գութանի տարբեր գիտափորձնական հետազոտությունների արդյունքները, շրջգութանիկով և առանց դրա (այդ թվում նաև մեր կողմից կատարված), ցույց տվեցին, որ մեր առաջարկված համակացված մեթենայի կազմում նպատակահարմար է ընդգրկել ճակատային գութան՝ կառուցվածքի կոմպակտության և ճակատային դասավորության շնորհիվ: Գութանի կառուցվածքից շրջգութանիկների հեռացումը հիմնավորվել է հաշվի

առնելով, որ շրջգութանիկի առկայությունը նպաստում է բազմաթիվ թերությունների ի հայտ գալուն:

Մասնավորապես ճակատային գութանի հիմնական թերություններից մեկը՝ մեծ քարչային դիմադրությունը նվազեցնելու համար տեսական հետազոտությունների հիման վրա առաջարկել ենք խոփթևային մակերևույթին տալ լրգարիթրմական սպիրալ տեսք:

Առանց շրջգութանիկների ճակատային գութանով վարի ստացված տեսքը հիմք է հանդիսացել հաջորդ տեխնոլոգիական գործընթացը՝ կատարող սկավառակային մարտկոցների պարամետրերի ճշգրտման համար: Կատարված գիտափորձերը ցուց տվեցին, որ և հարթ տեղանքում և՝ լանջերում ճակատային գութանով առերը լիարժեք չեն շրջվում: Ըստ գիտափորձերի արդյունքների նշված ճակատային գութանով վարված դաշտը ստանում է նկ. 8-ում բերված տեսքը: Հանդիպակաց իրաններով շրջվող առերը հիմնականում կուտակվում են իրանների միջնամասում:



Նկ. 8 Առանց շրջգութանիկների ճակատային գութանով վարի տեսքը հարթ տեղանքում և լանջերում

Առաջարկված համակցված մեքենայի աշխատանքի արդյունավետության բարձրացման նպատակով առաջարկություններ ենք ներկայացրել կատարելագործելու մեքենայի առաջին և երկրորդ օրականներ՝ առանց շրջգութանիկի ճակատային գութանը և հատկապես հատուկ պրոֆիլի սկավառակային մատկոցները:

Հիմք ընդունելով լաբորատոր և դաշտային գիտափորձերի արդյունքները, առաջարկվում է համակցված մեքենայի սկավառակային մարտկոցների կազմի մեջ մտնող տարրեր սկավառակների համար սահմանել գրոհի տարրեր անկյուններ՝ ըստ յուրաքանչյուրի կատարած աշխատանքի բնույթի: Մասնավորապես առաջին սկավառակին սահմանել գութանի($40\text{--}45^{\circ}$) երկրորդին՝ երեսվարիչի($10\text{--}35^{\circ}$), իսկ երրորդին՝ ցաքանի($10\text{--}22^{\circ}$) համար հանձնարարված գրոհի անկյունների համապատասխան տիրույթներ և լաբորատոր գիտափորձերով որոշել գրոհի անկյունների օպտիմալ արժեքները:

Այդ նպատակով ՀԱԱՀ հողային խրամատի վրա շարժական սայլակին ամրացված հատուկ ստենդի օգնությամբ կատարվել են տեսական հետազոտություններ, ստացված պարամետրերով պատրաստված սկավառակի լաբորատոր, ինչպես նաև դաշտային գիտափորձեր (նկ. 7 և 9): Որոշվել է սկավառակի քարշային դիմադրությունը և գնահատվել է տեխնոլոգիական գործընթացի որակը որպես ցուցանիշ ընտրելով հողաթմբի կողիրման և հարթեցման աստիճանը (արտահայտված տոկոսներով). սկավառակի ընդգրկման լայնության տիրույթում՝

շատ վատ (30-50%), վատ (50-60%), միջին (60-80%), լավ (80-90%), շատ լավ (գրեթե 100%) և շատ ավելի վատ (մինչև 30%) սանդղակով:



Նկ.9. Դրվագներ
համակցված
մեքենայի
սկավառակային
մարտկոցի
լաբորատոր և
դաշտային
գիտափորձերից


Գիտափորձի արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ սկավառակի գրոհի անկյան մեծացումը բերում է քարշային դիմադրության աճի, ուստի միայն քարշային դիմադրության ցուցանիշի հիման վրա հնարավոր չէ որոշել սկավառակի օպտիմալ գրոհի անկյունը: Այն որոշվել է քարշային դիմադրության և մշակման որակի ցուցանիշների համադրությամբ՝ առաջնահերթությունը տալով մշակության որակին: Վերլուծությունից պարզվեց նաև, որ առաջին սկավառակի համար մշակման լավագույն որակ կապահովվի սկավառակի մոտ 40° գրոհի անկյան դեպքում (25սմ մշակման խորության դեպքում), երկրորդ սկավառակի համար գրոհի օպտիմալ անկյունը կլինի մոտ 20° (20սմ մշակման խորության դեպքում), իսկ երրորդ սկավառակի համար օպտիմալ գրոհի անկյունը կլինի մոտ 15° (10սմ մշակման խորության դեպքում):

Սուածարկված համակցված մեքենայի գիտափորձերի արդյունքներով բարելավված հատուկ պրոֆիլի սկավառակային մարտկոցի տեխնոլոգիական սխեման բերված է նկ. 10-ում, իսկ մարտկոցի լաբորատոր փորձարկումից դրվագներ բերված են նկ. 11-ում:

Կատարվել է համակցված մեքենայի աշխատանքի որակի գնահատում լանջերում սկավառակների տարրեր անկյունների դեպքում:

Այս գիտափորձի նպատակն է գնահատական տալ մեր կողմից առաջարկված և՝ լաբորատոր և՝ դաշտային գիտափորձերի արդյունքներով կատարելագործված համակցված մեքենայի սկավառակային օղակի աշխատանքի որակին լեռնային պայմաններում, և ճշգրտել սկավառակների գրոհի անկյան օպտիմալ արժեքները՝ առը լանջիվայր և լանջիվեր հարթեցման դեպքում, որպես ցուցանիշ ընտրվել է անհարթության չափը:

Գիտափորձը կատարվել է լանջի երեք թեքությունների դեպքում՝ 5° , 9° և 14° : Դաշտային գիտափորձերի արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ սկավառակների գրոհի անկյան մեծացումը լանջերում բացասաբար է անդրադառնում մշակման որակի վրա լանջիվեր շրջելիս, իսկ լանջիվայր շրջելիս էական ազդեցություն չի թողնում:



Նկ. 10 Գիտափորձերի արդյունքներով առաջարկված համակցված մեքենայի սկավառակային օղակի բարելավված սխեման



Նկ. 11.
Բարելավված
հատուկ պրոֆիլի
սկավառակային
մարտկոցի
լարորատոր
փորձարկումից
դրվագներ

Լանջի թեքության մեծացմանը զուգահեռ մշակության որակը նվազում է: Դա հատկապես ցայտուն է զգացվում հողը լանջիվեր շրջման դեպքում: Լանջիվայր

շրջման դեպքում լանջի թերության մեծացումը նպաստում է անհարթությունների կրճատմանը:

Հինգերորդ գլխում որոշվել է համակցված հարթ վարի ճակատային գութանի կիրառման տարեկան տնտեսական արդյունավետությունը, որը կազմել է 302949 դրամ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Երկրագրության ինտենսիվացումը հանգեցնում է հողային ռեսուրսի դեգրադացման: Ակնհայտ է նաև այն պնդումը, որ չկա միասնական մոտեցում հողի մշակության տեխնոլոգիայի ընտրության հարցում: Մի տարածաշրջանում փայլուն դրսուրված տեխնոլոգիան կարող է մեկ այլ տարածաշրջանում չարդարացնել: Ուստի կախված հողակիմայական պայմաններից յուրաքանչյուր տարածաշրջանի համար պետք է լինի անհատական մոտեցում:

2. Հողի մշակության անվար և վարի ուղեկցությամբ գոյություն ունեցող տեխնոլոգիաների դրական և բացասական կողմերի համադրությունը ցույց է տանի, որ Հեռնային պայմաններում միանշանակ կանգ առնել որևէ մեկի վրա չի կարելի, քանի որ բոլոր տեխնոլոգիաներն էլ ունեն թերություններ, որոնցից մի մասը կարելի է վերացնել կամ մեղմացնել երկու տեխնոլոգիաները որոշակի պարբերականությամբ՝ փոխնիփոխ կիրառելով:

3. Հիմնավորելով անվար տեխնոլոգիաների լուրջ բացասական հետևանքները առաջարկվում է որոշակի պարբերականությամբ՝ 3-4 տարին մեկ, վարը ներառել նախացանքային մշակության տեխնոլոգիական գործնքացի մեջ: Դրան հասներու ուղիներից մեկը գործանների բազայի վրա համակցված մեքենայի ստեղծումն է, որի կազմում ընդգրկվել է բարելավված կառուցվածքով և պարամետրերով ճակատային գութան, հատուկ պրոֆիլ սկավառակավոր մարտկոցներ և գլանվակ:

4. Համակցված ճակատային գութանի թևի առավելագույն բեռնվածությունն առաջանում է հողի կտրման-տեխնոլոգիական գործնքացից, ուստի առաջարկվում է լոգարիթմական պարուրագծածն ուղղորդ կորով կազմավորել դանակ-թև մակերևույթի միայն հողի մեջ խրված հատվածը: Թևի վերգետնյա մասը գտնվում է հողի կտրման լարվածադեֆորմացիոն վիճակից դուրս գտնում, այդ մասի ուղղորդ կորն առաջարկվում է ընտրել հաստատուն շառավղով շրջանագծի մի հատվածով:

5. Տեսական հետազոտություններով ստացվել են թևի հողի մեջ մտնող հատվածի լոգարիթմական պարուրագծի տեսքով ուղղորդ կորի և թևի վերգետնյա մասի շրջանագծի աղեղի տեսքով ուղղորդ կորի շառավղի որոշման հավասարումները:

6. Առաջարկված համակցված մեքենայի հավասարակշռության խնդիրը լուծվել է գրաֆունախիտիկական եղանակով՝ օգտվելով նաև տեսական հետազոտությունների արդյունքներից: Հավասարակշռության խնդիրի լուծումը հնարավորություն է տվել գնահատել մեքենայի էներգետիկական ցուցանիշները, նախանշելով այդ ցուցանիշների լավարկման և մեքենայի կատարելագործման ուղղությունները:

7. Հանջերում համակցված մեքենայի սկավառակային մարտկոցների գիտափորձերի արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ սկավառակներով հողը լանջով վերև տեղափոխման դեպքում սկավառակների գրոհի անկյունների մեծացումը հողի մշակույթան որակի վրա անդրադառնում է բացասաբար, մինչ դեռ լանջով ներքև շրջման դեպքում՝ դրական: Հետևաբար սկավառակների գրոհի անկյունների օպտիմալացման հիմքում դրվել է լանջիվեր հողի տեղափոխման տարրերակում ստացված օպտիմալ անկյան տվյալները:

8. Առաջարկված մեքենայի լարորատոր և դաշտային գիտափորձերի արդյունքներով պարզվել է, որ և՛ հարթ տեղանքում, և՛ լանջերում համակցված մեքենայի ճակատային գութանով առերի բավարար շրջում և փիտրեցում չի կատարվում: Գութանի անցումից հետո առերը առանց փիտրեցներու կուտակվում են հրանների միջնամասում՝ ատեղեցով չփիտրեցված թմբածև մակերևույթ: Հաջորդող տեխնոլոգիական գործընթացի լիարժեք կատարման համար առաջարկվել է մեքենայի կառուցվածքում ընդգրկել հատուկ պրոֆիլի սկավառակային մարտկոցներ, որոնց միջոցով իրանների միջև առաջացած թմբածև մակերևույթը փիտրեցվում է և ցրվում իրանների ամրուց ընդգրկման լայնության սահմաններում: Հիմք ընդունելով սկավառակային մարտկոցի յուրաքանչյուր սկավառակի կատարած աշխատանքի բնույթը և ծավալը, առաջարկվել է սկավառակները տեղակայել տարրեր գրոհի անկյուններու: Մասնավորապես առաջին սկավառակի համար սահմանվել է սկավառակային գութանի, երկրորդին՝ սկավառակային երեսվարիչի, իսկ երրորդին՝ սկավառակային ցաքանի համար սահմանված գրոհի անկյունների համապատասխան միջակայթը: Լարորատոր գիտափորձերով սահմանված միջակայթերում որոշվել է գրոհի անկյունների օպտիմալ արժեքները որպես օպտիմալացվող գործոններ ընդունելով քարշային դիմադրությունը և մշակույթան որակը:

9. Համակցված մեքենայի տեխնիկա-շահագործական ցուցանիշների վերլուծությունը ցույց տվեց, որ դրա կիրառությունը նպատակահարմար է, ինչպես տնտեսական տեսանկյունից, ի հաշիվ շահագործական ցուցանիշների բարելավման, այնպես էլ բնապահպանական տեսանկյունից՝ ի հաշիվ դաշտում անցումների քանակի և տեխնիկայի վնասակար ազդեցության կրճատման:

10. Առաջարկվող մեքենայի կիրառումը վառելիքի հեկտարային ծախսը կնվազեցնի 3,83 լիտրով կամ 8,9 տոկոսով, իսկ տարեկան տնտեսական արդյունավետությունը կազմում է 302949 դրամ:

**Ապենախոսության հիմնական արդյունքներն արդացոված են հեղինակի
հետևյալ հրապարակութերում**

1. Եսոյան Ա.Մ., Մկրտչյան Հ.Դ., Միքայելյան Գ.Մ., Կարապետյան Գ.Ա.
Համակցված հարթ վարի ճակատային գույքան: << արտոնագիր թիվ 846Y, 2023:
2. Եսոյան Ա.Մ., Հարությունյան Ա.Վ., Հարությունյան Ա.Վ., Կարապետյան Գ.Ա.
ԲՈՒԼՂՈՉԵՐԻ ԴԱՆԱԿ-ԹԵՎ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՑ
ԴԻՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՐԱՄԵՏՐԵՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ: Ճարտ. և շին. համալսարանի
գիտական աշխատություններ, 2023/3(87), Էջ 10-18:
3. Aramayis M. Esoyan, Gegham M. Mikayelyan, Gevorg A. Karapetyan
Development of the technological scheme of the combined frontal plough and the
justification of the parameters of disk working bodies. Agriscience and Technology 2023.
N 4. pp.315-320
4. Gevorg KARAPETYAN
JUSTIFICATION OF THE ECONOMIC EFFICIENCY OF THE APPLICATION OF COMBINED
FRONT PLOUGH FOR SMOOTH PLOWING. Alternative Quarterly Academic Journal,
2024 (January-March), pp.109-115.
5. Gevorg Karapetyan
TRENDS IN THE DEVELOPMENT OF SOIL CULTIVATION TECHNOLOGIES IN THE
MOUNTAINOUS CONDITIONS OF THE REPUBLIC OF ARMENIA IN THE CONTEXT OF THE
ENVIRONMENTAL ISSUES. Alternative Quarterly Academic Journal - Volume 3-72, 2024 (July -
September), pp.72-79.
6. Esoyan Aramaik Myasnik, Karapetyan Gevorg Ashot.
Analysis of Results from Experimental Research on a Combined Plow for Flat Tillage and
Parameter Optimization. Agriscience and Technology 2024. N4, pp.297-302.
7. Aramayis Esoyan, Gevorg Karapetyan
EVALUATION OF ECONOMIC AND TECHNOLOGICAL INDICATORS OF THE COMBINED
FRONTAL PLOUGH FOR SMOOTH PLOWING. ALTERNATIVE. Quarterly Academic
Journal. January - March, 2025, pp. 67-75.

Կարապետյան Գևորգ Աշոտովիչ

Усовершенствование комбинированной почвообрабатывающей машины для горных
условий и обоснование параметров роторного рабочего органа

Диссертация на соискание ученой степени кандидата технических наук по
специальности 05.20.01 «МЕХАНИЗАЦИЯ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА»

Защита состоится 22 июля 2025г. в 11⁰⁰ часов, на заседании специализированного
совета 033 Комитет по высшему образованию и науке по присуждению ученых

степеней при Национальном аграрном университете Армении (адрес: Ереван 0009,
ул. Абовяна 74).

Использование тяжелых тракторов, часто включаемых в современные системы обработки почвы, многочисленные переходы сельскохозяйственную технику стимулируют процесс деградации. Переуплотнение значительно увеличивает тяговое сопротивление машин, что приводит к дополнительным затратам энергоресурсов. Оптимальным решением проблемы является объединение технологических операций при одновременном сокращении количества проходов технических средств по всему полю, снижении расхода горюче-смазочных материалов и других энергоресурсов, улучшении качества обработки почвы:

Целью диссертационной работы является: разработка комбинированной технологии минимальной обработки почвы с обязательным включением вспашки и разработки машины для ее реализации:

В первой главе представлена постановка вопроса.

Вторая глава посвящена теоретическим исследованиям. Разработана технологическая схема предлагаемой комбинированной машины. Обоснованы параметры минимального сопротивления лемешно-отвальной поверхности плуга и дисковых рабочих органов. Выполнен силовой анализ комбинированного фронтального плуга и решена задача его уравновешенности с целью оценки энергетических показателей машины и наметить пути их улучшения. Внедрение предлагаемой технологии и комбинированной машины обосновано в контексте экологических проблем.

В третьем разделе была разработана программа и методика экспериментального исследования. В основу программы положено, прежде всего, технологическое требование к предлагаемому комбинированному агрегату на равнинной местности и склонах за один проход агрегата обеспечивать предпосевную поверхность удовлетворительного качества.

Четвертая глава посвящена анализу результатов научных экспериментов. В результате лабораторно-полевых экспериментальных исследований уточнены эксплуатационные, технологические и геометрические параметры плоскорезной комбинированной машины. Обоснована целесообразность использования предлагаемой комбинированной машины, дана оценка качества обработки почвы, определены энергозатраты и намечены направления дальнейшего совершенствования.

Проведена оценка качества работы комбинированного плуга на склонах и обоснование конструкции и формы дисковых батарей. Определены оптимальные углы атаки для отдельных дисков.

В пятой главе определена годовая экономическая эффективность применения комбинированного плуга.

Gevorg Ashot Karapetyan

Enhancement of a Combined Soil-Tillage Machine for Mountainous Conditions and
Justification of the Parameters of Its Rotary Working Element

Thesis For the Phd of Technical sciences, speciality 05.20.01 “Mechanization of
Agriculture”

Defense will be held on 22 July, 2025 at 11⁰⁰, at the session of Spezialized Council on
033 of Higher Education and Science Committee in the National Agrarian University of
Armenia (address: Yerevan, 0009, Abovyan str. 74).

The use of heavy tractors now widely integrated into modern tillage systems and the numerous passes they make across agricultural land accelerate soil degradation. Over compaction markedly increases the traction resistance of the equipment, leading to higher energy consumption. An optimal solution is to integrate multiple technological operations into a single pass of the implement across the field, thereby reducing fuel and lubricant consumption as well as other energy resources, while improving soil cultivation quality.

The objective of this dissertation is to develop a combined minimal tillage technology that necessarily includes both plowing and soil loosening, and to design a machine for its implementation:

Chapter 1 presents the problem statement.

Chapter 2 is devoted to theoretical investigations. A technological scheme for the proposed combined machine is developed. The parameters governing the minimum resistance of the blade-wing surface of the plow and of the disc working elements are justified. A strength analysis of the combined frontal plough is performed, and its balancing is solved in order to assess the machine's energy characteristics and to outline directions for their improvement. The ecological rationale for adopting the proposed technology and machine is also provided.

Chapter 3 describes the program and methodology of the experimental study. The program is founded primarily on the technological requirement that the proposed combined implement, in a single pass over both flat terrain and slopes, must produce a seedbed surface of satisfactory quality.

Chapter 4 analyzes the results of the scientific experiments. Laboratory and field trials refine the operational, technological, and geometric parameters of the disc-coulter combined machine. The advisability of using the proposed combined machine is substantiated, its soil cultivation quality is evaluated, energy expenditures are determined, and directions for further improvement are identified. The performance of the combined plough on slopes is assessed, and the design and configuration of the disc assemblies are justified. Optimal attack angles for individual discs are established.

Chapter 5 determines the annual economic efficiency of using the combined plow.